ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

--- օգոստոսի 2020 թվականի № ---Ա
ք. Երևան

«ԷՖԱՐՎԻ ՄԱՍՐԻԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԻ, ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ, ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ ՀԱՐՅՈՒՐ ՏՈԿՈՍԸ ԿԱԶՄՈՂ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏԵՐ «ԷՖԱՐՎԻ ԼԱ ՊՐՈՎԻԴԵՆՍԻԱ» ԷՍ. ԷԼ. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ԳՐԱՎԱԴՐՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) «ԷՖԱրՎի Մասրիկ» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով) ներկայացված 2020 թվականի հունիսի 15-ի և հունիսի 30-ի գրություններով հայտնել է, որ «Մասրիկ-1» արևային էլեկտրակայանում «Մասրիկ-1» արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի կառուցման ծրագիրն իրականացվելու է փոխառության ներգրավմամբ, և, այդ նպատակով Ընկերությունը նախատեսում է կնքել վարկային պայմանագրեր ու գրավադնել իրեն պատկանող և ապագայում իր կողմից ձեռք բերվելիք շարժական, անշարժ գույքը, գույքային իրավունքները, Ընկերության կանոնադրական կապիտալի հարյուր տոկոսը կազմող՝ «ԷՖԱրՎի Լա Պրովիդենսիա» Էս. Էլ. ընկերությանը պատկանող հասարակ, «ԷՖԷսԷլ Սոլար» Էս. էլ. ընկերությանը պատկանող արտոնյալ բաժնետոմսերը, ինչպես նաև Ընկերության կողմից թողարկվելիք բաժնետոմսերը՝ հօգուտ Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի ու Միջազգային ֆինանսական կորպորացիայի և վերջիններիս գրավի գործակալ՝ «Ամերիաբանկ» փակ բաժնետիրական ընկերության, իսկ Ընկերության բաժնետեր «ԷՖԱրՎի Լա Պրովիդենսիա» Էս. Էլ. ընկերության միակ բաժնետեր հանդիսացող, «Ֆոտովատիո Ռենյուաբլ Վենչրս» Էս. Էլ. ընկերությանը պատկանող հարյուր տոկոս բաժնետոմսերը՝ հօգուտ Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի ու Միջազգային ֆինանսական կորպորացիայի օտարերկրյա գրավի

գործակալ «Սիթիբանկ» Էն. Էյ. Լոնդոնյան մասնաճյուղի (գրավի պայմանագիրը ենթակա է կնքման Իսպանիայի Թագավորության օրենսդրության համաձայն): Նշվածից ելնելով՝ Ընկերությունը խնդրել է Հանձնաժողովի համաձայնությունը՝ կնքելու համապատասխան գործարքներ (այսուհետ՝ Գործարքներ),

բ) Հանձնաժողովը, ղեկավարվելով «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ կետով, 2020 թվականի հուլիսի 2-ի №ԳԲ/34.1-Մ2-4/2584-20 գրությամբ դիմել է Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ՝ ստանալու Գործարքների վերաբերյալ կառավարության դիրքորոշումը,

գ) Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի ղեկավարի 2020 թվականի հուլիսի 24-ի №02/12.8/32577-2020 գրությամբ Հանձնաժողով են ներկայացվել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների ու էկոնոմիկայի նախարարությունների, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության, Հայաստանի Հանրապետության անվտանգության խորհրդի քարտուղարի դիրքորոշումները՝ Գործարքների մասով առարկություններ չունենալու վերաբերյալ,

դ) Հանձնաժողովի կողմից Գործարքներին համաձայնություն տալը, «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն, չի խախտում էներգետիկ համակարգի հուսալիությունը, անվտանգությունը և ներքին շուկայի սպառողների շահերը, չի սպառնում ազգային անվտանգությանն ու պետական շահերին, իսկ անհրաժեշտ փորձ ունեցող անձի վերաբերյալ դրույթը Գործարքների նկատմամբ կիրառելի չէ, և,

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածը և Հանձնաժողովի 2019 թվականի փետրվարի 27-ի №39Ն որոշմամբ հաստատված կարգը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Համաձայնություն տալ՝

1) հօգուտ Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի ու Միջազգային ֆինանսական կորպորացիայի և վերջիններիս գրավի գործակալ՝ «Ամերիաբանկ» փակ բաժնետիրական ընկերության գրավադնելու՝

ա. Ընկերությանը պատկանող և ապագայում վերջինիս կողմից ձեռք բերվելիք շարժական, անշարժ գույքը և գույքային իրավունքները,

բ. Ընկերության կանոնադրական կապիտալի հարյուր տոկոսը կազմող՝ «ԷֆԱրՎի Լա Պրովիդենսիա» Էս. Էլ. ընկերությանը պատկանող հասարակ, «ԷֆԷսԷլ Սոլար» Էս. Էլ.

ընկերությանը պատկանող արտոնյալ բաժնետոմսերը, ինչպես նաև Ընկերության կողմից հետագայում թողարկվելիք բաժնետոմսերը,

2) հօգուտ Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի ու Միջազգային ֆինանսական կորպորացիայի օտարերկրյա գրավի գործակալ «Սիթիբանկ» Էն. Էյ. Լոնդոնյան մասնաճյուղի գրավադնելու Ընկերության բաժնետեր «ԷֆԱրՎի Լա Պրովիդենսիա» Էս. Էլ. ընկերության միակ բաժնետեր հանդիսացող «Ֆոտովատիո Ռենյուաբլ Վենչրս» Էս. Էլ. ընկերությանը պատկանող հարյուր տոկոս բաժնետոմսերը։

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված գործարքների կնքման ժամկետը չի կարող գերազանցել սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից վեց ամիսը։

3. Ընկերությանը՝

1) սույն որոշման 1-ին կետով նախատեսված գործարքները կնքելուց հետո երկշաբաթյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել դրանց վերաբերյալ բոլոր փաստաթղթերի պատճենները.

2) ընդունել ի գիտություն, որ Ընկերությունն իրավասու է սույն որոշումը բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ այն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում։

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
-- օգոստոսի 2020թ.